# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/67

ք. Վանաձոր

«25» հուլիսի 2019թ.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Մ. Ասլանյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ռ. Հովհաննիսյան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Վանաձոր համայնքի Երևանյան խճուղի թիվ 90 հասցեում գտնվող հանրակացարանի ընդհանուր օգտագործման տարածքի և տանիքի ընթացիկ նորոգման աշխատանքներ ը (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90-րդ օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100% տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե

երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 6 384 000 (վեց միլիոն երեք հարյուր ութսունչորս հազար) ՀՀ դրամ, որից 1 064 000 (մեկ միլիոն վաթսունչորս հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232000654
ՀՎՀՀ 06901936
Մ.Ասլանյան

---------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

Ռ.Հովհաննիսյան ՍՊԸ
ք.Վանաձոր Կ.Դեմիրճյան 1գ
«Ինեկոբանկ,Վանաձոր մ/ճ
Հ/Հ 2050222083701001
ՀՎՀՀ 06940332
Ռ.Հովհաննիսյան

---------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 1*
*« 25 » հուլիսի 2019 թ. կնքված*
*«ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/67» ծածկագրով պայմանագրի*

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ***

**ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 90 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԱՆԻՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

հազ.դրամ

| հ/հ | Անվանումը | Չափ միավոր | Քանակ | Միավորի գինը | Արժեքը |
|---|---|---|---|---|---|
| | 1.Առաջի հարկ | | | | |
| 1. | Պատերի և առաստաղի գաջի սվաղի քանդում | մ$^2$ | 48 | 0,145 | 6,96 |
| 2. | Պատերի և առաստաղի սվաղի մաքրում | մ$^2$ | 349.20 | 0.103 | 35.9676 |
| 3. | Պատերի գաջի և սվաղի վերանորոգում | մ$^2$ | 48 | 2.061 | 98.928 |
| 4. | Առաստաղի գաջի սվաղի վերանորոգում | մ$^2$ | 35 | 2.377 | 83.19 |
| 5. | Պատերի ներկում ջրադիսպերսիոն ներկով | մ$^2$ | 160 | 0.732 | 117.12 |
| 6. | Առաստաղի ներկում ջրադիսպերսիոն ներկով | մ$^2$ | 186.5 | 0.833 | 155.35 |
| 7. | Փայտե պատուհանների ջարդված ապակիների փոխում | մ$^2$ | 25 | 4.633 | 115.82 |
| 8. | Փայտե դռների յուղաներկում 2 անգամ 35%-ից ավելի հին մաքրումով | մ$^2$ | 37.72 | 0.968 | 36.51 |
| 9. | Պատերի յուղաներկում 2 անգամ 35%-ից ավելի հին մաքրումով | մ$^2$ | 146.7 | 0.908 | 133.2036 |
| 10. | Առաջացած շին աղբի բարձում ավտոինքնաթափին ձեռքով | տն | 2.5 | 0.313 | 0.782 |
| 11. | Շին աղբի տեղափոխում ինքնաթափով 12կմ | տն | 2.5 | 2.169 | 5.422 |
| 12. | Նկուղային հարկում առաջին հարկի հատակների ամրացման համար լրացուցիչ փայտե սյուների տեղադրում 150x150 /h=3մ 4հատ/ | մ$^2$ | 0.27 | 190.095 | 51.32565 |
| 13 | Փայտե սյուների հրդեհապաշտպանում հրակայուն լուծույթով | մ$^2$ | 0.27 | 5.718 | 1.54386 |
| | 2. Երկրորդ հարկ | | | | |
| 1. | Պատերի և առաստաղի գաջի սվաղի քանդում | մ$^2$ | 27 | 0.145 | 3.915 |
| 2. | Պատերի և առաստաղի սվաղի մաքրում | մ$^2$ | 317.25 | 0.103 | 32.67 |
| 3. | Պատերի գաջի և սվաղի վերանորոգում | մ$^2$ | 42 | 2.061 | 86.56 |
| 4. | Առաստաղի գաջի սվաղի վերանորոգում | մ$^2$ | 27 | 2.377 | 64.17 |
| 5. | Պատերի ներկում ջրադիսպերսիոն ներկով | մ$^2$ | 173.05 | 0.732 | 126.67 |
| 6. | Առաստաղի ներկում ջրադիսպերսիոն ներկով | մ$^2$ | 144.2 | 0.833 | 120.11 |
| 7. | Փայտե դռների յուղաներկում 2 անգամ 35%-ից ավելի հին մաքրումով | մ$^2$ | 40 | 0.968 | 38.72 |
| 8. | Պատերի յուղաներկում 2 անգամ 35%-ից ավելի հին մաքրումով | մ$^2$ | 147.2 | 0.908 | 133.65 |
| 9. | Փայտե պատուհանների ջարդված ապակիների փոխում | մ$^2$ | 15 | 4.633 | 69.49 |
| 10. | Առաջացած շին աղբի բարձում ավտոինքնաթափին ձեռքով | տն | 1.7 | 0.313 | 0.53 |
| 11. | Շին աղբի տեղափոխում ինքնաթափով 12կմ | տն | 1.7 | 2.169 | 3.68 |
| | 3.Երրորդ հարկ | | | | |
| 1. | Պատերի և առաստաղի գաջի սվաղի քանդում | մ$^2$ | 35 | 0,145 | 5.07 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. | Պատերի և առաստաղի սվաղի մաքրում | մ² | 317.7 | 0.103 | 32.72 |
| 3. | Պատերի գաջի և սվաղի վերանորոգում | մ² | 48 | 2.061 | 98.928 |
| 4. | Առաստաղի գաջի սվաղի վերանորոգում | մ² | 32 | 2.377 | 76.06 |
| 5. | Պատերի ներկում ջրադիսպերսիոն ներկով | մ2 | 173.5 | 0.732 | 127 |
| 6. | Առաստաղի ներկում ջրադիսպերսիոն ներկով | մ2 | 144.2 | 0.833 | 120.11 |
| 7. | Փայտե պատուհանների ջարդված ապակիների փոխում | մ² | 12 | 4.633 | 55.59 |
| 8. | Փայտե դռների յուղաներկում 2անգամ 35%-ից ավելի հին մաքրումով | մ² | 38.4 | 0.968 | 37.17 |
| 9. | Պատերի յուղաներկում 2 անգամ 35%-ից ավելի հին մաքրումով | մ² | 148.35 | 0.908 | 134.70 |
| 10. | Առաջացած շին աղբի բարձում ավտոինքնաթափին ձեռքով | տն | 1.6 | 0.313 | 0.5 |
| 11. | Շին աղբի տեղափոխում ինքնաթափով 12կմ | տն | 1.6 | 2.169 | 3.47 |
| | 4.Աստիճանավանդակներ | | | | |
| 1. | Պատերի և առաստաղի գաջի սվաղի քանդում | մ² | 17 | 0,145 | 2.46 |
| 2. | Պատերի և առաստաղի սվաղի մաքրում | մ² | 345.20 | 0.103 | 35.53 |
| 3. | Պատերի գաջի և սվաղի վերանորոգում | մ² | 32 | 2.061 | 65.95 |
| 4. | Առաստաղի գաջի սվաղի վերանորոգում | մ² | 15 | 2.377 | 35.65 |
| 5. | Պատերի ներկում ջրադիսպերսիոն ներկով | մ² | 241 | 0.732 | 176.41 |
| 6. | Առաստաղի և աստիճանահարթակի ներկում ջրադիսպերսիոն ներկով | մ² | 111.6 | 0.833 | 92.96 |
| 7. | Փայտե պատուհանների ջարդված ապակիների փոխում | մ2 | 7 | 4.633 | 32.43 |
| 8. | Մետաղական բազրիքի յուղաներկում 2 անգամ | մ2 | 23 | 0.888 | 20.42 |
| 9. | Պատերի յուղաներկում 2 անգամ 35%-ից ավելի հին մաքրումով | մ2 | 51 | 1,051 | 53,60 |
| 10. | Աստիճանների և հարթակների յուղաներկում 2 անգամ | մ2 | 84,30 | 0,638 | 53,78 |
| 11. | Առաջացած շին աղբի բարձում ավտոինքնաթափին ձեռքով | տն | 0,80 | 0.313 | 0.25 |
| 12. | Շին աղբի տեղափոխում ինքնաթափով 12կմ | տն | 0,80 | 2.169 | 1,73 |
| | 5.Տանիքի վերանորոգում | | | | |
| 1 | Տանիքի փայտե էլեմենտների ապամոնտաժում | մ3 | 1,2 | 20,051 | 24,06 |
| 2 | Տանիքի փայտե էլեմենտների կառուցում. Օգտագործելով նոր փայտանյութ | մ3 | 1,8 | 195,776 | 352,39 |
| 3 | Կավարամածի քանդում և կառուցում | մ2 | 60,00 | 0,639 | 38,34 |
| 4 | Կողահատ փայտանյութ կավարամածի կառուցման համար | մ,3 | 0,8 | 157,172 | 125,73 |
| 5 | Ալիքավոր ա/ց թերթերից կտուրի քանդում | մ2 | 70,00 | 0,164 | 11,48 |
| 6 | Տանիքի ծածկույթի կառուցում ա/ց ալիքավոր թերթերից. Կավարամածի հետ միասին | մ2 | 85,00 | 4,388 | 372,98 |
| 7 | Տանիքի փայտե կոնստրուկցիաների հրդեհապաշտպանում հրակայուն լուծույթով | մ3 | 1,5 | 5,718 | 8,57 |
| 8 | Կավարամածի մշակում հրակայուն լուծույթով | մ2 | 60,00 | 0,187 | 11,22 |
| 9 | Լրացուցիչջրհոս խողովակների տեղադրում ց/թիթեղներից Փ100 | մ | 25 | 1,968 | 49,2 |
| 10 | Ծունկերի տեղադրում ց/թիթեղից Փ 100 | հատ | 10 | 1,435 | 14,35 |
| 11 | Տանիքի վերանորոգում 0,55մմ հաստ. ց/թիթեղով | մ2 | 40 | 0,745 | 29,80 |
| 12 | Տանիքի վերանորոգման համար ց/թիթեղ 0,55մմ | մ2 | 40 | 2,591 | 103,64 |
| | 6,Բացվածքներ / միջանցքների և սան.հանգույցների/ | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում | մ2 | 16,8 | 24,722 | 415,32 |
| | Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում | մ2 | 16,8 | 16,25 | 273,000 |
| | 7,Զուգարանների վերանորոգում /5հատ/ | | | | |
| 1 | Ց/ավազային հարթեցուցիչ շերտի քանդում | մ2 | 86 | 0,300 | 25,80 |
| 2 | Ց/ավազային հարթեցուցիչ շերտի կառուցում 3սմ հաստ | մ2 | 86,00 | 1,016 | 87,37 |
| 3 | Ջրամեկուսիչ շերտի կառուցում մեկ շերտ իզոգամով | մ2 | 86,00 | 2,137 | 183,78 |
| 4 | Ց/ավազային հարթեցուցիչ շերտի կառուցում 5սմ հաստ | մ2 | 86,00 | 1,597 | 137,34 |
| 5 | Պատերի գաջի սվաղի քանդում | մ2 | 475,00 | 0,145 | 68,87 |
| 6 | Պատերի սվաղում ց/ավազային շաղախով | մ2 | 475,00 | 1,578 | 749,55 |
| 7 | Առաջացած շին աղբի բարձում ավտոինքնաթափին ձեռքով | տն | 5,00 | 0.313 | 1,56 |
| 8. | Շին աղբի տեղափոխում ինքնաթափով 12կմ | տն | 5,00 | 2.169 | 10,84 |
| 9 | Պատերի յուղաներկում 2 անգամ | մ2 | 475,00 | 0,875 | 415,62 |
| 10 | Պատերի յուղաներկում 2 անգամ | մ2 | 86,00 | 1,422 | 122,29 |
| | 8,Բաղնիքի վերանորոգում | | | | |
| 1 | Ց/ավազային հարթեցուցիչ շերտի քանդում | մ2 | 17,20 | 0,300 | 5,16 |
| 2 | Ց/ավազային հարթեցուցիչ շերտի կառուցում 3սմ հաստ | մ2 | 17,20 | 1,016 | 17,47 |
| 3 | Ջրամեկուսիչ շերտի կառուցում մեկ շերտ իզոգամով | մ2 | 17,20 | 2,137 | 36,75 |
| 4 | Ց/ավազային հերթացուցիչ շերտի կառուցում 5սմ հաստ | մ2 | 17,20 | 1,597 | 27,46 |
| 5 | Պատերի գաջի սվաղի քանդում | մ2 | 95,00 | 0,145 | 13,77 |
| 6 | Պատուհանի բացվածքի մասնակի լրացում ուղիղ կտրվածքի Արթիկ տուֆով 30սմ հաստ | մ3 | 0.50 | 17.156 | 8.57 |
| 7 | Պատերի սվաղում ց/ավազային շաղախով | մ2 | 96.50 | 1.578 | 152.27 |
| 8 | Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ. Ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տողադրում բացվող | մ2 | 0.40 | 24.722 | 9.88 |
| 9 | Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում չբացվող | մ2 | 0.40 | 16.250 | 6.50 |
| 10 | Պատուհանի մետաղական ճաղաշարի կառուցում | տն | 0.014 | 63.239 | 0.88 |
| 11 | Անկյունակ L45x3 | մ | 3.20 | 1.141 | 3.65 |
| 12 | Արման Փ10Ac-1 | տն | 0.007 | 367.492 | 2.57 |
| 13 | Մետաղական ճաղաշարի յուղակներում 2անգամ | մ2 | 0.30 | 0.888 | 0.26 |
| 14 | Առաջացած շին աղբի բարձում ավտոինքնաթափին ձեռքով | տն | 1.00 | 0.313 | 0.313 |
| 15 | Շին աղբի տեղափոխում ինքնաթափով 12սմ | տն | 1.00 | 2.169 | 2.169 |
| 16 | Պատերի յուղաներկում 2անգամ | մ2 | 95 | 0.875 | 83.12 |
| 17 | Պատերի յուղաներկում 2անգամ | մ2 | 17.20 | 1.422 | 24.45 |
| 18 | Էլեկտրական ջրատաքացուցիչ N=80լ հզոր 7կվտ/ | հատ | 3 | 91.800 | 275.40 |
| 19 | Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում փորձարկումով Փ20 | մ | 25.00 | 2.319 | 57.97 |
| 20 | Պոլիպրոպիլենե փականի տեղադրում Փ20 | հատ | 10 | 3.085 | 30.85 |
| 21 | Խողովակները ամրացնող մասեր Փ20 | Հատ | 35 | 0.035 | 1.22 |
| 22 | Պոլիպրոպիլենե արտուղում թեքում/Փ20 | հատ | 12.00 | 0.040 | 0.48 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 23 | Ծնցուղ խառնիչով տեղադրում Φ15 | հատ | 3. | 8.115 | 24.34 |
| 24 | Թուջե հոսակի տեղադրում Φ50 | հատ | 3. | 5.117 | 15.35 |
| | 9.Էլ սնուցում | | | | |
| 1 | Տուփ վարդակի տեղադրման | հատ | 27 | 0.831 | 22.43 |
| 2 | Տուփ բաժանարար փակ տեղադրման | հատ | 52 | 0.613 | 31.87 |
| 3 | Պղնձե ջիղերով ՊՎՔ մեկուսացումով հաղորդալարի անցկացում սվաղի տակ 2x2 5մմ | մ | 600 | 0.292 | 175.20 |
| 4 | Վարդակ շտեպսելային | հատ | 12 | 1.342 | 16.10 |
| 5 | Անջատիչ միաբևեռ փակ տեղադրման | հատ | 15 | 1.064 | 15.96 |
| 6 | Լուսատուի տեղադրում /լամպի հետ միասին/ | հատ | 30 | 5.978 | 179.34 |
| | Ընդամենը | | | | 7359.628 |
| | Վերադիր ծախսեր 13.3% | | | | 978.835 |
| | Ընդամենը | | | | 8338.463 |
| | Շահույթ 11% | | | | 917.231 |
| | Ընդամենը | | | | 9255.695 |
| | ԱԱՀ 20% | | | | 1851.139 |
| | Ընդամենը | | | | 11106.833 |

Աշխատանքներն իրականացվելու են հատուկ բանվորական արտահագուստով՝ պահպանելով անվտանգության կանոնները:

* Կապալառուն աշխատանքները կատարում է Վանաձոր համայնքում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232000654
ՀՎՀՀ 06901936
Մ.Ասլանյան

-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

Ռ.Հովհաննիսյան ՍՊԸ
ք.Վանաձոր Կ.Դեմիրճյան 1գ
«Ինեկոբանկ,Վանաձոր մ/ճ
Հ/Հ 2050222083701001
ՀՎՀՀ 06940332
Ռ.Հովհաննիսյան

-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 2*
*« 25 » հուլիս 2019թ. կնքված*
*«ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/67» ծածկագրով պայմանագրի*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**
**Վանաձոր համայնքի Երևանյան խճուղի թիվ 90 հասցեում գտնվող հանրակացարանի ընդհանուր օգտագործման տարածքի և տանիքի ընթացիկ նորոգման աշխատանքներ Ի ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | ***Վանաձոր համայնքի Երևանյան խճուղի թիվ 90 հասցեում գտնվող հանրակացարանի ընդհանուր օգտագործման տարածքի և տանիքի ընթացիկ նորոգման աշխատանքներ*** | Պայմանագրի կնքման պահից | Պայմանագրի կնքման օրվանից հաշված 90-րդ օրը |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | Պայմանագրի կնքման պահից | Պայմանագրի կնքման օրվանից հաշված 90-րդ օրը |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ900232000654
ՀՎՀՀ 06901936
Մ.Ասլանյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

Ռ.Հովհաննիսյան ՍՊԸ
ք.Վանաձոր Կ.Դեմիրճյան 1գ
«Ինեկոբանկ,Վանաձոր մ/ճ
Հ/Հ 2050222083701001
ՀՎՀՀ 06940332
Ռ.Հովհաննիսյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 3*
*« 25» հուլիս 2019թ. կնքված*
*«ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/67» ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | 45221142/2 | Վանաձոր համայնքի Երևանյան խճուղի թիվ 90 հասցեում գտնվող հանրակացարանի ընդհանուր օգտագործման տարածքի և տանիքի ընթացիկ նորոգման աշխատանքներ | - | - | - | - | - | - | 6 384 000 | 6 384 000 | 6 384 000 | 6 384 000 | 6 384 000 | 6 384 000 | 6 384 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232000654
ՀՎՀՀ 06901936
Մ.Ասլանյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

Ռ.Հովհաննիսյան ՍՊԸ
ք.Վանաձոր Կ.Դեմիրճյան 1գ
«Ինեկոբանկ,Վանաձոր մ/ճ
Հ/Հ 2050222083701001
ՀՎՀՀ 06940332
Ռ.Հովհաննիսյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 25 » հուլիս 2019թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/67» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
________________________
________________________
գտնվելու վայրը ____________
հհ ________________________
հվհհ ______________________

Պատվիրատու
________________________
________________________
գտնվելու վայրը ____________
հհ________________________
հվհհ______________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
________________________
ստորագրություն
________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
________________________
ստորագրություն
________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված թիվ 4.1*
*« 25 » հուլիս 2019թ. կնքված*
*«ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/67» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 ___ թ. ______________________________-ին կնքված N ______________ գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Պատվիրատուի անունը
Կապալառուի անունը
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն

Հավելված թիվ 1
« 25 » հուլիսի 2019 թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ-19/67» ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

**Վանաձոր համայնքի Երևանյան խճուղի թիվ 90 հասցեում գտնվող հանրակացարանի ընդհանուր օգտագործման տարածքի և տանիքի ընթացիկ նորոգման աշխատանքներ**

| հ/հ | Անվանումը | Չափման միավոր | Քանակը | Միավորի գինը | Արժեքը |
|---|---|---|---|---|---|
| | **1.Առաջի հարկ** | | | | |
| 1 | Պատերի և առաստաղի գաջի սվաղի քանդում | | | | |
| 2 | Պատերի և առաստաղի սվաղի մաքրում | $մ^2$ | 48 | 0,101 | 4,834 |
| 3 | Պատերի գաջի և սվաղի վերանորոգում | $մ^2$ | 349,2 | 0,072 | 24,980 |
| 4 | Առաստաղի գաջի սվաղի վերանորոգում | $մ^2$ | 48 | 1,431 | 68,708 |
| 5 | Պատերի ներկում ջրադիսպերսիոն ներկով | $մ^2$ | 35 | 1,651 | 57,781 |
| 6 | Առաստաղի ներկում ջրադիսպերսիոն ներկով | $մ^2$ | 160 | 0,508 | 81,342 |
| 7 | Փայտե պատուհանների ջարդված ապակիների փոխում | $մ^2$ | 186,5 | 0,579 | 107,897 |
| 8 | Փայտե դռների յուղաներկում 2 անգամ 35%-ից ավելի հին մաքրումով | $մ^2$ | 25 | 3,218 | 80,443 |
| 9 | Պատերի յուղաներկում 2 անգամ 35%-ից ավելի հին մաքրումով | $մ^2$ | 37,72 | 0,672 | 25,359 |
| 10 | Առաջացած շին աղբի բարձում ավտոինքնաթափին ձեռքով | $մ^2$ | 146,7 | 0,631 | 92,513 |
| 11 | Շին աղբի տեղափոխում ինքնաթափով 12կմ | տոն | 2,5 | 0,217 | 0,543 |
| 12 | Նկուղային հարկում առաջին հարկի հատակների ամրացման համար | տոն | 2,5 | 1,506 | 3,766 |
| 13 | Փայտե սյուների հրդեհապաշտպանում հրակայուն լուծույթով | $մ^2$ | 0,27 | 132,025 | 35,647 |
| | | $մ^2$ | 0,27 | 3,971 | 1,072 |
| | **2. Երկրորդ հարկ** | | | | |
| 1 | Պատերի և առաստաղի գաջի սվաղի քանդում | | | 0,000 | |
| 2 | Պատերի և առաստաղի սվաղի մաքրում | $մ^2$ | 27 | 0,101 | 2,719 |
| 3 | Պատերի գաջի և սվաղի վերանորոգում | $մ^2$ | 317,25 | 0,072 | 22,695 |
| 4 | Առաստաղի գաջի սվաղի վերանորոգում | $մ^2$ | 42 | 1,431 | 60,119 |
| 5 | Պատերի ներկում ջրադիսպերսիոն ներկով | $մ^2$ | 27 | 1,651 | 44,574 |
| 6 | Առաստաղի ներկում ջրադիսպերսիոն ներկով | $մ^2$ | 173,05 | 0,508 | 87,977 |
| 7 | Փայտե դռների յուղաներկում 2 անգամ 35%-ից ավելի հին մաքրումով | $մ^2$ | 144,2 | 0,579 | 83,425 |
| 8 | Պատերի յուղաներկում 2 անգամ 35%-ից ավելի հին մաքրումով | $մ^2$ | 40 | 0,672 | 26,892 |
| 9 | Փայտե պատուհանների ջարդված ապակիների փոխում | $մ^2$ | 147,2 | 0,631 | 92,828 |
| 10 | Առաջացած շին աղբի բարձում ավտոինքնաթափին ձեռքով | $մ^2$ | 15 | 3,218 | 48,266 |
| 11 | Շին աղբի տեղափոխում ինքնաթափով 12կմ | տոն | 1,7 | 0,217 | 0,370 |
| | | տոն | 1,7 | 1,506 | 2,561 |
| | **3.Երրորդ հարկ** | | | | |
| 1 | Պատերի և առաստաղի գաջի սվաղի քանդում | | | 0,000 | |
| 2 | Պատերի և առաստաղի սվաղի մաքրում | $մ^2$ | 35 | 0,101 | 3,525 |
| 3 | Պատերի գաջի և սվաղի վերանորոգում | $մ^2$ | 317,7 | 0,072 | 22,727 |
| 4 | Առաստաղի գաջի սվաղի վերանորոգում | $մ^2$ | 48 | 1,431 | 68,708 |
| 5 | Պատերի ներկում ջրադիսպերսիոն ներկով | $մ^2$ | 32 | 1,651 | 52,828 |
| 6 | Առաստաղի ներկում ջրադիսպերսիոն ներկով | մ2 | 173,5 | 0,508 | 88,205 |
| 7 | Փայտե պատուհանների ջարդված ապակիների փոխում | մ2 | 144,2 | 0,579 | 83,425 |
| 8 | Փայտե դռների յուղաներկում 2անգամ 35%-ից ավելի հին մաքրումով | $մ^2$ | 12 | 3,218 | 38,613 |
| 9 | Պատերի յուղաներկում 2 անգամ 35%-ից ավելի հին մաքրումով | $մ^2$ | 38,4 | 0,672 | 25,816 |
| 10 | Առաջացած շին աղբի բարձում ավտոինքնաթափին ձեռքով | $մ^2$ | 148,35 | 0,631 | 93,553 |
| 11 | Շին աղբի տեղափոխում ինքնաթափով 12կմ | տոն | 1,6 | 0,217 | 0,348 |
| | | տոն | 1,6 | 1,506 | 2,410 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **4.Աստիճանավանդակներ** | | | | |
| 1 | Պատերի և առաստաղի գաջի սվաղի քանդում | | | 0,000 | |
| 2 | Պատերի և առաստաղի սվաղի մաքրում | $մ^2$ | 17 | 0,101 | 1,712 |
| 3 | Պատերի գաջի և սվաղի վերանորոգում | $մ^2$ | 345,2 | 0,072 | 24,694 |
| 4 | Առաստաղի գաջի սվաղի վերանորոգում | $մ^2$ | 32 | 1,431 | 45,805 |
| 5 | Պատերի ներկում ջրադիսպերսիոն ներկով | $մ^2$ | 15 | 1,651 | 24,763 |
| 6 | Առաստաղի և աստիճանահարթակի ներկում ջրադիսպերսիոն ներկով | $մ^2$ | 241 | 0,508 | 122,522 |
| 7 | Փայտե պատուհանների ջարդված ապակիների փոխում | $մ^2$ | 111,6 | 0,579 | 64,565 |
| 8 | Մետաղական բազրիքի յուղաներկում 2 անգամ | մ2 | 7 | 3,218 | 22,524 |
| 9 | Պատերի յուղաներկում 2 անգամ 35%-ից ավելի հին մաքրումով | մ2 | 23 | 0,617 | 14,185 |
| 10 | Աստիճանների և հարթակների յուղաներկում 2 անգամ | մ2 | 51 | 0,730 | 37,227 |
| 11 | Առաջացած շին աղբի բարձում ավտոինքնաթափին ձեռքով | | 84,3 | 0,443 | 37,354 |
| 12 | Շին աղբի տեղափոխում ինքնաթափով 12կմ | տն | 0,8 | 0,217 | 0,174 |
| | **5.Տանիքի վերանորոգում** | տն | 0,8 | 1,506 | 1,205 |
| 1 | Տանիքի փայտե էլեմենտների ապամոնտաժում | | | 0,000 | |
| 2 | Տանիքի փայտե էլեմենտների կառուցում. Օգտագործելով նոր | մ3 | 1,2 | 13,926 | 16,711 |
| 3 | Կավարամածի քանդում և կառուցում | մ3 | 1,8 | 135,970 | 244,747 |
| 4 | Կողահատ փայտանյութ կավարամածի կառուցման համար | մ2 | 60 | 0,444 | 26,628 |
| 5 | Ալիքավոր ա/ց թերթերից կտուրի քանդում | մ,3 | 0,8 | 109,159 | 87,327 |
| 6 | Տանիքի ծածկույթի կառուցում ա/ց ալիքավոր թերթերից. Կավարամածի | մ2 | 70 | 0,114 | 7,973 |
| 7 | Տանիքի փայտե կոնստրուկցիաների հրդեհապաշտպանում հրակայուն լուծույթով | մ2 | 85 | 3,048 | 259,042 |
| | | մ3 | 1,5 | 3,971 | 5,957 |
| 8 | Կավարամածի մշակում հրակայուն լուծույթով | | | | |
| 9 | Լրացուցիչ ջրհոս խողովակների տեղադրում ց/թիթեղներից Φ100 | մ2 | 60 | 0,130 | 7,793 |
| 10 | Ծունկերի տեղադրում ց/թիթեղից Φ 100 | մ | 25 | 1,367 | 34,170 |
| 11 | Տանիքի վերանորոգում 0,55մմ հաստ. ց/թիթեղով | հատ | 10 | 0,997 | 9,966 |
| 12 | Տանիքի վերանորոգման համար ց/թիթեղ 0,55մմ | մ2 | 40 | 0,517 | 20,697 |
| | **6,Բացվածքներ / միջանցքների և սան.հանգույցների/** | մ2 | 40 | 1,800 | 71,980 |
| 1 | Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով | | | 0,000 | |
| | 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում | մ2 | 16,8 | 17,170 | 288,455 |
| 2 | Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում | մ2 | 16,8 | 11,286 | 189,604 |
| | **7,Զուգարանների վերանորոգում /5հատ/** | | | | |
| 1 | Ց/ավազային հարթեցուցիչ շերտի քանդում | | | 0,000 | |
| 2 | Ց/ավազային հարթեցուցիչ շերտի կառուցում 3սմ հաստ | մ2 | 86 | 0,208 | 17,919 |
| 3 | Ջրամեկուսիչ շերտի կառուցում մեկ շերտ իզոգամով | մ2 | 86 | 0,706 | 60,684 |
| 4 | Ց/ավազային հարթեցուցիչ շերտի կառուցում 5սմ հաստ | մ2 | 86 | 1,484 | 127,640 |
| 5 | Պատերի գաջի սվաղի քանդում | մ2 | 86 | 1,109 | 95,387 |
| 6 | Պատերի սվաղում ց/ավազային շաղախով | մ2 | 475 | 0,101 | 47,835 |
| 7 | Առաջացած շին աղբի բարձում ավտոինքնաթափին ձեռքով | մ2 | 475 | 1,096 | 520,578 |
| 8 | Շին աղբի տեղափոխում ինքնաթափով 12կմ | տն | 5 | 0,217 | 1,087 |
| 9 | Պատերի յուղաներկում 2 անգամ | տն | 5 | 1,506 | 7,532 |
| 10 | Պատերի յուղաներկում 2 անգամ | մ2 | 475 | 0,608 | 288,660 |
| | | մ2 | 86 | 0,988 | 84,934 |
| | **8,Բաղնիքի վերանորոգում** | | | | |
| 1 | Ց/ավազային հարթեցուցիչ շերտի քանդում | | | 0,000 | |
| 2 | Ց/ավազային հարթեցուցիչ շերտի կառուցում 3սմ հաստ | մ2 | 17,2 | 0,208 | 3,584 |
| 3 | Ջրամեկուսիչ շերտի կառուցում մեկ շերտ իզոգամով | մ2 | 17,2 | 0,706 | 12,137 |
| 4 | Ց/ավազային հերթացուցիչ շերտի կառուցում 5սմ հաստ | մ2 | 17,2 | 1,484 | 25,528 |
| 5 | Պատերի գաջի սվաղի քանդում | մ2 | 17,2 | 1,109 | 19,077 |
| 6 | Պատուհանի բացվածքի մասնակի լրացում ուղիղ կտրվածքի Արթիկ տուֆով 30սմ հաստ | մ2 | 95 | 0,101 | 9,567 |
| | | մ3 | 0,5 | 11,915 | 5,958 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7 | Պատերի սվաղում ց/ավազային շաղախով | մ2 | 96,5 | 1,096 | 105,759 |
| 8 | Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ. Ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում բացվող | մ2 | 0,4 | 17,170 | 6,868 |
| 9 | Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում չբացվող | մ2 | 0,4 | 11,286 | 4,514 |
| 10 | Պատուհանի մետաղական ճաղաշարի կառուցում | | | | |
| 11 | Անկյունակ L45x3 | տն | 0,014 | 43,921 | 0,615 |
| 12 | Արմատ Φ10Ac-1 | մ | 3,2 | 0,792 | 2,536 |
| 13 | Մետաղական ճաղաշարի յուղակներում 2անգամ | տն | 0,007 | 255,231 | 1,787 |
| 14 | Առաջացած շին աղբի բարձում ավտոինքնաթափին ձեռքով | մ2 | 0,3 | 0,617 | 0,185 |
| 15 | Շին աղբի տեղափոխում ինքնաթափով 12սմ | տն | 1 | 0,217 | 0,217 |
| 16 | Պատերի յուղաներկում 2անգամ | տն | 1 | 1,506 | 1,506 |
| 17 | Պատերի յուղաներկում 2անգամ | մ2 | 95 | 0,608 | 57,732 |
| 18 | Էլեկտրական ջրատաքացուցիչ N=80լ հզոր 7կվտ/ | մ2 | 17,2 | 0,988 | 16,987 |
| 19 | Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում փորձարկումով Φ20 | հատ | 3 | 63,757 | 191,271 |
| 20 | Պոլիպրոպիլենե փականի տեղադրում Φ20 | մ | 25 | 1,611 | 40,265 |
| 21 | Խողովակները ամրացնող մասեր Φ20 | հատ | 10 | 2,143 | 21,426 |
| 22 | Պոլիպրոպիլենե արտուղում թեքում/Φ20 | հատ | 35 | 0,024 | 0,851 |
| 23 | Ցնցուղ խառնիչով տեղադրում Φ15 | հատ | 12 | 0,028 | 0,333 |
| 24 | Թուջե հոսակի տեղադրում Φ50 | հատ | 3 | 5,636 | 16,908 |
| | **9.Էլ սնուցում** | հատ | 3 | 3,554 | 10,662 |
| 1 | Տուփ վարդակի տեղադրման | | | 0,000 | |
| 2 | Տուփ բաժանարար փակ տեղադրման | հատ | 27 | 0,577 | 15,583 |
| 3 | Պղնձե ջիղերով ՊՎՔ մեկուսացումով հաղորդալարի անցկացում սվաղի | հատ | 52 | 0,426 | 22,139 |
| 4 | Վարդակ շտեպսելային | մ | 600 | 0,203 | 121,680 |
| 5 | Անջատիչ միաբևեռ փակ տեղադրման | հատ | 12 | 0,932 | 11,185 |
| 6 | Լուսատուի տեղադրում /լամպի հետ միասին/ | հատ | 15 | 0,739 | 11,085 |
| | | հատ | 30 | 4,152 | 124,555 |
| | Ընդամենը | | | | 5320,000 |
| | ԱԱՀ 20% | | | | 1064,000 |
| | Ընդամենը | | | | 6384,000 |

Պատվիրատու՝Վանաձորի համայնքապետարան
ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր,Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 2900232000654
ՀՎՀՀ 06901936

_______________Մ.Ասլանյան
/ստորագրություն/

Կապալառու՝Ռ.Հովհաննիսյան ՍՊԸ
ք.Վանաձոր Կ.Դեմիրճյան 1գ
,Ինեկոբանկ,Վանաձոր մ/ճ
Հ/Հ 2050222083701001
ՀՎՀՀ 06940332

_______________Ռ.Հովհաննիսյան
/ստորագրություն/